ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2025 թ. դեկտեմբերի 9-ին կայացած թիվ 5 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2025 թ. դեկտեմբերի 9-ին կայացած թիվ 5 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 28-ը:

Նիստի նախագահ Կարեն Ղազարյանը նշեց, որ կատարվել է օրակարգի փոփոխություն և օրակարգին ավելացել է ևս 2 հարց՝

1. Հովիկ Հարությունի Փանոսյանի ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ - 2025» Միջազգային մրցույթի 25SRNSF-1F020 ծածկագրով թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը: Թեմա՝ Հարավ-կովկասյան բարձրադիր քաղցրահամ լճերում ցիանաբակտերիաների և ցիանաֆագերի բազմազանության և ցիանաբակտերիաներով վնասակար ծաղկման վրա դրանց հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիլի Քալաշյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

Կ. Ղազարյանի կողմից առաջարկված նոր օրակարգը դրվեց քվեարկության և այն հաստատվեց միաձայն: Օրակարգը հաստատելուց հետո գիտական խորհուրդը անցավ հարցերի քննարկմանը:

Օրակարգ՝

1. «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրենի հաղորդումը կազմակերպությունում տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջների վերաբերյալ:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի հետ համատեղ «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող Հովիկ Հարությունի Փանոսյանի «Հարավ-կովկասյան բարձրադիր քաղցրահամ լճերում ցիանաբակտերիաների և ցիանաֆագերի բազմազանության և ցիանաբակտերիաներով վնասակար ծաղկման վրա դրանց

հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը» 25SRNSF-1F020 ծածկագրով թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը:

4. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Մարգարիտա Մկրտումյանի, Լիլի Քալաշյանի և նախկին հայցորդ Արմինե Պարոնիկյանի թեկնածուական ատենախոսության թեմաների վերահաստատման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշման 28-րդ կետի համաձայն «Կենսաբանություն» ԳՀԻ որոշ տարակարգերի համար հավելյալ որակական և քանակական չափանիշների առաջարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյանը: Նշվեց, որ ըստ 28-րդ կետի յուրաքանչյուր կազմակերպությունում տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջները հաստատվում են կազմակերպության ղեկավարի կողմից՝ կազմակերպության գիտական խորհրդի առաջարկությամբ: Կ. Ա. Թոչունյանը առաջարկեց գիտական կադրերի որոշ տարակարգերի ատեստավորման գործընթացում ներառել հետևյալ հավելյալ չափանիշները՝

1. Գլխավոր գիտաշխատող՝ h-index 20 (Scopus), վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 6 բակալավրի, մագիստրոսի կամ ասպիրանտի ղեկավարում;
2. Առաջատար գիտաշխատող՝ h-index 10 (Scopus), վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 3 բակալավրի, մագիստրոսի կամ ասպիրանտի ղեկավարում;
3. Լաբորատորիայի վարիչ՝ վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 2 բակալավրի, մագիստրոսի կամ ասպիրանտի ղեկավարում, ինչպես նաև առնվազն 1 տեղական կամ միջազգային դրամաշնորհի ղեկավար;
4. Ատեստավորում անցնող բոլոր գիտական տարակարգերի համար կհաշվարկվեն միայն այն գիտական հրապարակումները, որտեղ ԵՊՀ-ն նշված է որպես աշխատավայր (affiliation):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ առաջարկել գիտական կադրերի որոշ տարակարգերի ատեստավորման գործընթացում ընդգրկել վերոնշված հավելյալ չափանիշները:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ով համառոտ ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա «Բժշկական

սնկաբանություն և կիրառական բուսաբանություն» (7 ուսանող), «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» (11 ուսանող), «Կիրառական մանրէաբանություն» (9 ուսանող), «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» (12 ուսանող), «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա» (16 ուսանող), «Կենսաֆիզիկա» (6 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա մագիստրատուրայի 1 կուրսի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

3. ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանություն ԳՀԻ ինստիտուտի Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի Մանրէաբանական կենսավերականգնման խմբի ավագ գիտաշխատող, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանի՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ - 2025» մրցույթի շրջանակներում իրականացվող «Հարավ-կովկասյան բարձրադիր քաղցրահամ լճերում ցիանաբակտերիաների և ցիանաֆագերի բազմազանության և ցիանաբակտերիաներով վնասակար ծաղկման վրա դրանց հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը» 25SRNSF-1F020 ծածկագրով թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, պրոֆեսոր Հ. Հ. Փանոսյանը: Նշվեց, որ նախագծի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի և Հայաստանի բարձրադիր քաղցրահամ լճերում բակտերիական և բակտերիաֆագային բազմազանությունը և կազմը՝ հիմնված մետագենոմային վերլուծության վրա: Հաշվետու ժամանակահատվածում համաձայն օրացուցային պլանի իրականացվել են Սևանա լճի ջրի և նստվածքային նմուշների նմուշառում ինչպես բուն ծաղկման, այնպես էլ, ծաղկման ժամանակաշրջանից առաջ և հետո՝ գերիշխող ցիանաբակտերիաների և ցիանաֆագերի հայտնաբերման նպատակով: Մեկուսացվել են ԴՆԹ նմուշներ մետագենոմային վերլուծության համար: Մեկուսացվել են նաև գերիշխող ցիանաբակտերիաների ներկայացուցիչներ և նույնականացվել պոլիֆազային մոտեցմամբ՝ հիմնված ֆենոտիպային հատկությունների և ֆիլոգենետիկական մարկերների վերլուծության վրա: Ֆագաբիոմի հետազոտության նպատակով ջրային նմուշներից ուլտրաֆիլտրացիոն եղանակով խտացվել են բակտերիաֆագային մասնիկները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են սեմինարներ, այդ թվում առցանց, փոխայցելություններ: Հայկական խմբի երկու երիտասարդ անդամներ 15-օրյա վերապատրաստում են անցել Գեորգի Էլիավայի անվան Բակտերիաֆագերի, մանրէաբանության և վիրուսաբանության ինստիտուտում ֆագերի հետ աշխատանքի հմտություններ ձեռք բերելու և փորձի փոխանակման նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմայի հետագա ֆինանսավորումը:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Մարգարիտա Մկրտումյանի, Լիլի Քալաշյանի և նախկին հայցորդ Արմինե Պարոնիկյանի թեկնածուական ատենախոսության թեմաների վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Մկրտումյանը, ասպիրանտ Լիլի Քալաշյանի գիտական ղեկավար՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Տիգրան Աշոտի Հարությունյանը, նախկին հայցորդ Արմինե Պարոնիկյանը: Ներկայացվեց ատենախոսությունների թեմաների վերնագրերի վերահաստատման անհրաժեշտությունը:

Ասպիրանտ **Մարգարիտա Մկրտումյանը** ներկայացրեց թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի Հանրապետության նեռմիցետների ուսումնասիրությունը», որը հաստատվել էր գիտական խորհրդի 2023թ. հուլիսի 6-ին կայացած թիվ 17 նիստի ժամանակ: Նա նշեց, որ այդ աշխատանքը հնարավոր էր իրականացնել միայն արտասահմանում վերապատրաստվելուց հետո, սակայն ընտանեկան պայմաններից ելնելով չեր կարող բացակայել քաղաքից: Ներկայումս նա ընդգրկված է Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագրում՝ ծածկագիր 25RG-1F172, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել որոշ թանգարանային տարածքների օդի միկոբիոտայի աղտոտվածության աստիճանի գնահատում և պայմանականորեն պաթոգեն սնկերի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակում: Հետևաբար նպատակահարմար է կատարել թեմայի վերահաստատում և առաջարկվեց նոր թեմա՝ «ՀՀ որոշ թանգարանների օդի միկոբիոտայի ուսումնասիրությունը և պաթոգեն տեսակների դեմ պայքարի միջոցների մշակումը»:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. **Տիգրան Աշոտի Հարությունյանը**, ով հանդիսանում է ասպիրանտ Լիլի Քալաշյանի գիտական ղեկավար նշեց, որ ասպիրանտի ատենախոսության թեման «Քաղցկեղային բջիջների ռադիոզգայնության բարձրացում գենոմային անկայունության մակածմամբ» հաստատվել է 2024թ. սեպտեմբերի 30-ին կայացած թիվ 4 նիստի ժամանակ:

Սակայն ասպիրանտական թեմայի իրականացման ընթացքում ստացվել են նոր տվյալներ, որոնք զգալիորեն ընդլայնել են աշխատանքների շրջանակը: Նախկին թեմայի շրջանակում նախատեսվում էին հետազոտություններ միայն բջջային կուլտուրաների կիրառմամբ: Մինչդեռ in vitro մոդելներում ստացված արդյունքները կարելի է ընդլայնել in vivo հետազոտություններով: Նաև ասպիրանտն ունի տպագրված հոդվածներ (ցանկը ներկայացված է ստորև), որոնք ներառում են in vivo արդյունքները: Ուստի նպատակահարմար ենք գտնում ներառել այս տվյալներն ասպիրանտական թեմայում, ինչի պատճառով թեմայի անվանումը պետք է փոփոխել՝ դարձնելով ավելի ընդգրկուն:

Ղեկավարի կողմից առաջարկվեց նոր թեման՝ «Մարդու բջիջներում գենետիկական անկայունության մակածումը օքսիդային սթրեսի պայմաններում»:

Մեսրոպ Մաշտոցի անվան ԳՀ ինստիտուտ Մատենադարանի կրտսեր գիտաշխատող **Արմինե Երվանդի Պարոնիկյանը**, ով նախկինում հանդիսանում էր ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հայցորդ (2008-2012թթ), ներկայացրեց ատենախոսության թեմայի «Թղթի կենսավնասում» (հաստատված 2008 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 1 նիստին) վերնագրի փոփոխության անհրաժեշտությունը:

Արմինե Պարոնիկյանի կողմից նշվեց, որ 2011թ-ին ընդունվել է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀ ինստիտուտ որպես կենսաբան - կրտսեր վերականգնող, 2015թ-ից-2020թթ աշխատել է որպես ավագ վերականգնող, իսկ 2024թ մինչ օրս աշխատում է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀ ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 2011 թվականից մինչ օրս Արմինե Պարոնիկյանը իրականացնում է Մատենադարանում պահվող կենսավնասմանը ենթարկված հին ձեռագրերի սնկաբանական հետազոտություններ, ինչպես նաև կատարում է բնական բիոցիդների հակասնկային ակտիվության գնահատմանը ուղղված աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոնշվածը նպատակահարմար է իրականացնել թեմայի փոփոխություն և առաջարկվեց ատենախոսության նոր թեմա՝ «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀ ինստիտուտի գրավոր ժառանգության միկոբիոտայի ուսումնասիրությունները և կենսավնասման ենթարկված նմուշների վրա բնական բիոցիդների հակասնկային ակտիվության գնահատումը»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերահաստատել Մարգարիտա Գևորգի Մկրտումյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «ՀՀ որոշ թանգարանների օդի միկոբիոտայի ուսումնասիրությունը և պաթոգեն տեսակների դեմ պայքարի միջոցների մշակումը», Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ):

Առկա ասպիրանտ Լիլի Քալաշյանի և նախկին հայցորդ Արմինե Պարոնիկյանի թեկնածուական ատենախոսության թեմաները վերահաստատել հաջորդ գիտխորհրդի նիստի ժամանակ՝ ներկայացված վերնագրերում որոշակի փոփոխություններ կատարելուց հետո:

Գիտական խորհրդի ավարտին քննարկվեցին ընթացիկ որոշ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Վ. Շահազիզյան